

խոռովիչ, քանի որ կը խոսսափին վերլուծումէ, անբացատրելի ըլլալնուն: Ոճիր-արկած շահագործող թերթօնագիր մը հեշտանքով իր գիրքին մէկ կարեւոր գլուխը պիտի տար պատահարի մը, զոր ունիմ մտքիս մէջ սեւեռուած, անջինջ ու պարզ: 1918ին, Փետրուարին ինծի վիճակուեցաւ ապրիլ տրաման փախուստի մը, թալա-աթի ոստիկանութեան ցանցէն, Պոլսոյ վրայով անցնիլ Պուլկարիա: Քաղաքական դատապարտեալ մըն էի: Լուսանկարս՝ բաշխուած ոստիկանական բոլոր կեդրոններուն: Չեմ պատմեր հոս, թէ ինչպէս ճարուեցան թուղթերը: Գերման զինուորներու համազգեստները: Բաւ է յայտարարել, որ կատարուեցան բոլոր ձեւակերպական արարողութիւնները, արձանագրութիւնները, դիւանէ դիւան, Սիրզէճիի մեծ կայարանին մէջ, ուր թուրքերը հաստատած էին գաղտնի ոստիկանութեան շատ զօրաւոր պիւրօ մը եւ կը գործածէին իրենց ամէնէն ճարտար որսահանները: Անցայ սակայն, դէմքի գալով հանդերձ պատին փակցուած իմ լուսանկարին: Գերման զինուորի համազգեստը կախարդական բանաձեւ մըն էր, հրաշք մըն ալ սա անշուշտ: Նոյն միջոցով Պուլկարիա ինկած ուրիշներ դեռ չեն մեռած:

Մատթէոս Մելիքիանեանց միամիտ էր շատ ու ատով՝ անպաշտպան, ազատել կրնալու համար իր կարծառօտ անձնաւորութեան ընդարձակ ոգիսականը, մարդկային պատահարին տոգիւմէնտին հանդէպ շատ խորունկ, մռայլ իմ հետաքրքրութենէս, որ գրամով, խանդավառ, ցնորական իմ խառնուածքիս աննահանջ յատակը կազմեց: Իմ գրական աշխատանքը չի գար ուրիշ ակէ: Բոլոր իմ վիպակները, վէպերը վաւերատիպ անձնաւորութեանց ու աւելի քան իրաւ դէպքերու արձագանգներ են: «Մնացորդաց»ը ուրիշ բան չէ, եթէ ոչ պատանեկան այդ զօրաւոր ձգտումին պատշաճեցումը կեանքին, այսինքն՝ մարդկային պատահարներու աւելի մեծ թիւի մը, - ինձմէ պահուածին վրայ: Այդ հոգեկան տրամադրութիւնն էր, որ զիս ըրաւ լուռ, ուրիշները լսե-